ՆՈՐԻՑ՝ ՎՈԼՈԴՅԱ ԲԱԲԱՅԱՆԸ

Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին, որ հարակցագծային ու ծավալատարածական լուծումներով որոշակի ընդհանրություններ ունի Ս. Էջմիածնի Մայր տաճարի հետ, հայոց հողի վրա կառուցված բոլոր ժամանակների ամենախոշոր պաշտամունքային շինություններից է: Այս եզակի կոթողն իր եռահարկ զանգակատան հետ, հիրավի, Շուշիի պարծանքն է: Վեր հառնելով քաղաքի կենտրոնում, այն հպարտորեն իշխում է ոչ միայն շրջապատի, այլեւ ամբողջ Կարկառի ընդարձակ հովտի վրա: Այնպես որ, առաջին անգամ Շուշի այցելած յուրաքանչյուր մարդ անմիջապես մտածում է, որ այս անզուգական տաճարը կառուցողն է այս քաղաքի իսկական տերը...

Հայի ճակատագիր է բաժին հասել նաեւ Ղազանչեցոց եկեղեցուն. այն փուշ էր դարձել հայոց Շուշիին իրեն տեր համարող երեկվա խաշնարածի աչքում: Զարմանքից ուղղակի ապշում ես, թե ինչպես է այն կանգուն մնացել: Չէ՞ որ քաղաքի մյուս Մատրաղեցոց, Մեղրեցոց, Կուսանոց, Ռուսական եկեղեցիները ջնջվել էին Շուշիի համայնապատկերից, իրենց տեղը զիջելով անճաշակ անճոռնի շինությունների:

1982-ին, Էջմիածնի եւ արցախահայության բազում բողոքներից հետո, Ադրբեջանի մշակույթի նախարարությունը «մեծահոգաբար» թույլատրել է վերանորոգել եկեղեցին: Հայ շինարարները, Գառնիի տաճարը վերականգնող վարպետ Վոլոդյա Բաբայանի գլխավորությամբ, հաղթահարելով բազմաթիվ ու բազմաբնույթ խոչընդոտներ, գրեթե ավարտել էին հիմնական նորոգումները, արդեն գմբեթի խոյն էր պատրաստվում, բայց վրա հասավ 1988-ը, եւ ամեն ինչ կիսատ մնաց, ավելին՝ նոր մոլուցքով ավերվեց արվածը, հանվեց նաեւ հրաշքով պահպանված զանգակատան խաչը: Նորոգումներին զուգահեռ քաղաքի «նոր տերերը» ձեռնամուխ եղան մի բարմնելի բայլի. եկեղեցին քարդարկելու նպատակով սկսեցին այն օղակել բարձրահարկ բնակելի շենքերով: Բարեբախտաբար, այդ վայրենի ծրագիրը չհաջողվեց իրականացնել:

Շուշին ազատագրելուց հետո, 1993թ. հունվարին, կրկին սկսվել եւ հաջողությամբ առաջ են տարվում եկեղեցու վերանորոգման աշխատանքները, որոնք իրականացնում են ԼՂՀ հատուկ գիտա-վերականգնողական արտադրական վարչության (պետ՝ Ռ. Երիցյան) վարպետները: Նրանց ամենօրյա օգնություն են ցույց տալիս քաղաքի բնակիչները ու Շուշիի գնի զինվորները: Այստեղ է նաեւ Վոլոդյա Բաբայանը:

- Վերջին անգամն ենք նորոգում, ասում է նա, եւ ես համապատասխանում եմ այդ խոսքերին:

ԿՈՄԻՏԱՍ
ՏԵՐ-ԴԱՆԻԵԼՅԱՆ
ՇՈՒՇԻ